Հուսիկ Արա

Pandemia

Մեկ մետր է արգելքը մեր միջև,
հազիվ այնքան, որ ձեռքերը չհասնեն իրար.
աղմկոտ մեղքն էր մեր արանքում,
հիմա լուռ տեղավորվել է Աստված.
որքա՞ն նեղ տարածք է հարկավոր լույսին՝
ազատ զգալու համար:

Փակ են դռները,
պատուհանները՝ զոց.
աշխարհն է ազատ:
Կապած քիթուբերան.
բառը չի հնչում՝ ձայն անապատի,
և կարեկցանք է ամեն խոսք:

Հարազատ է մեր փախուստը,
մտերիմս,
սիրտ է ու բարի կամք.
չենք արտանետում մեր ներսինը,
և չի թունավորվում երկինքը՝
որտեղ մեր երազներն են:

Դատավոր է խիղճը,
և գթությունն այնքան շատ է,

որ բանտն էլ է բուժարան.
Մարիամ է ամեն ճերմակ խալաթ
և Քրիստոս մեր մեջ՝ յուրաքանչյուր դեղահաբ:

Բնությունը սնում էր,
որ հոշոտենք իրեն.
հիմա մաքուր լվացված է աշխարհը՝
առանց անձրևի:
Ի~նչ սպիտակ է լույսը ծաղկած սալորենու մեջ
և որքան կապույտ,
երբ կաթում է մանուշակի թերթերին:

Տիեզերքի գարունը
երկիր է հասել աներկյուղ՝
մարդուց անսարսուռ.
բացակա են մեր ձեռքերը: